**Դիմում-հայտը կարող է մերժվել, եթե՝**

- ներկայացված փաստաթղթերն ամբողջական չեն,
- ներկայացված փաստաթղթերը կամ փաստաթղթերում ներկայացված տվյալները չեն համապատասխանում իրականությանը,
- առկա է Հաճախորդի, նրա հետ փոխկապակցված անձանց (նաև (Երաշխավոր(ներ)ի) բացասական վարկային պատմություն,
- Հաճախորդը, նրա հետ փոխկապակցված անձիք (նաև (Երաշխավոր(ներ)ը) ունեն ժամկետնաց վարկային պարտավորություններ,
- Հաճախորդի վարկունակության գնահատումը տվել է բացասական արդյունք (այս դեպքում Դիմում-հայտը պարտադիր մերժվում է),
- ներկայացված փաստաթղթերում առկա տեղեկատվությունը հակասում է փաստացի գործունեության վայր կատարած այցելության ընթացքում բացահայտված հանգամանքներին (փաստերին),
- չի հիմնավորվում վարկի ստացման անհրաժեշտությունը,
- Պատասխանատու բաժնի ղեկավարի կամ Պատասխանատու բաժնի Վարկային մասնագետի հիմնավոր կարծիքով վարկի տրամադրումն Ընկերության համար պարունակում է ռիսկեր կամ նրանց հիմնավոր կարծիքով կան այլ հիմքեր.
- առկա են կամ վարկի տրամադրումից հետո կարող են առաջանալ այնպիսի ռիսկեր, որոնք հետագայում կարող են մեծապես նվազեցնել վարկառուի վարկունակության մակարդակը:
- դիմում հայտը կարող է մերժվել նաև այն դեպքում, երբ հաճախորդը կամ նրա ընտանիքի անդամները դիմել են Ընկերությանը տվյալ Կարգի շրջանակներում վարկ ստանալու խնդրանքով նախորդ երեք ամիսների ընթացքում և ստացել են մերժում:

| | |
|---|---|
| Վարկավորման անթույլատրելի նպատակներ | • բնակարանի կառուցում կամ վերանորոգում,<br>• երրորդ անձանց նկատմամբ պարտքի մարում,<br>• ծխախոտի, ծխախոտային արտադրանքի արտադրություն, վերամշակում և առևտուր,<br>• ներմուծված ապրանքների մեծածախ առևտրային գործունեություն,<br>• մանրածախ առևտրային գործունեություն, որը ներառում է սույն կետում նշված որևէ ապրանքի վաճառք,<br>• սպառողական վարկեր,<br>• մետաղների առևտուր,<br>• նավթամթերքների, ներառյալ գազ, դիզել, բենզին առևտուր,<br>• թունաքիմիկատների առք և վաճառք,<br>• թորած (թունդ) ոգելից խմիչքների արտադրություն, վերամշակում և վաճառք: |